**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/18 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/49» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 18-ը ապրիլի 2016թ.

Մասնակցում էին՝ ժամը 09³⁰

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյան,
ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության կատարողականի աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ս. Աթանեսյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան:

***«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/18 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

*(Ա. Գրիգորյան)*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/18-ՀՀՊՆՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Գրիգորյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «Յուղերի և քսուքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ |
| 2 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| 3 | «Մոսէսքո» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:.*

**2 .«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/18 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Գրիգորյան)

2.1 Թվով 3 մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ի, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի գումարը պակաս է 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկների հիսուն տոկոսից: «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է համատեղ գործունեության պայմանագիրը, ինչպես նաև համատեղ գործունեությամբ հանդես գալու դեպքում հրավերի N 1 և 2 հավելվածները պետք է հաստատված լինեն համատեղ գործունեության պայմանագրի բոլոր մասնակիցների կողմից /պետք է դրվեն մասնակիցների կնիքները, լիազորված անձի կողմից ստորագրվելու դեպքում անհրաժեշտ է հայտով ներկայացնել նաև լիազորագիր/, իսկ որակավորման չափորոշիչների առկայությունը հավաստող հավելվածները՝ այն մասնակցի կողմից, որը համատեղ գործունեության պայմանագրով ապահովելու է տվյալ չափանիշին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը: «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ի 3-րդ կետում նշված չէ 9-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի արտադրության երկիրը:

Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

«Մոսէսքո» ՍՊԸ –ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, իսկ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չեն շտկել անհամապատասխանությունները, որի հիմքով էլ հանձնաժողովը մերժել է «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ամբողջությամբ, իսկ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ա. Գրիգորյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

| Չ/թ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Նախահաշվային գին | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ | | | «Մոսէսքո» ՍՊԸ | | | 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով | |
| 1 | Տուրբինի քսայուղեր /ՄՍ-20/ | կգ | 1 000 | 1 570 000 | 1 125 000 | 225 000 | 1 350 000 | 1 270 000 | 254 000 | 1 524 000 | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ |
| 2 | Տուրբինի քսայուղեր /ՄՍ-8պ/ | կգ | 1 000 | 1 850 000 | 1 375 000 | 275 000 | 1 650 000 | 1 447 500 | 289 500 | 1 737 000 | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ |
| 3 | Փոխանցման տուփի յուղեր /Ավիաիպոիդ ՏՍ-ԳԻՊ/ | կգ | 3 000 | 40 995 000 | | | | 24 585 000 | 4 917 000 | 29 502 000 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| 4 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ԱՄԳ-10/ | կգ | 3 000 | 23 700 000 | 9 962 500 | 1 992 500 | 11 955 000 | 14 640 000 | 2 928 000 | 17 568 000 | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ |
| 5 | Շարժիչի յուղեր /ՄՏ-16Պ/ | կգ | 20 000 | 30 000 000 | | | | 21 250 000 | 4 250 000 | 25 500 000 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| 6 | Փոխանցման տուփի յուղեր /ՏԱՊ-15վ/ | կգ | 50 000 | 67 000 000 | | | | 46 875 000 | 9 375 000 | 56 250 000 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| 7 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով | կգ | 5 000 | 49 000 000 | | | | 24 362 500 | 4 872 500 | 29 235 000 | «Մոսէսքո» ՍՊԸ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգտագործվող յուղեր /ՄԳԵ-10ա/ | | | | | | | | | |
| 8 | Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Ռ մակնիշի/ | կգ | 2 000 | 3 340 000 | 1 941 667 | 388 333 | 2 330 000 | 2 100 000 | 420 000 | 2 520 000 | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ |
| 9 | Հակակոռոզիոն յուղեր /ՖՊ-10/ | կգ | 10 000 | 87 000 000 | | | | 97 500 000 | 19 500 000 | 117 000 000 | Նախահաշվային գնից բարձր գին, միաժամանակյա բանակցություն |
| 10 | Հակակոռոզիոն յուղեր /Կ-17/ | կգ | 50 | 120 000 | | | | 87 500 | 17 500 | 105 000 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| 11 | Օդամղիչային յուղեր /Կոմպրեսորային ԿՁ-10/ | կգ | 400 | 480 000 | | | | 498 000 | 99 600 | 597 600 | Նախահաշվային գնից բարձր գին, միաժամանակյա բանակցություն |
| 12 | Տեխնոլոգիական յուղեր /Տրանսֆորմատորային ԳԿ/ | կգ | 300 | 510 000 | 337 500 | 67 500 | 405 000 | 367 500 | 73 500 | 441 000 | «Նեֆտեպրոմ» ՍՊԸ |

«Մոսէսքո» ՍՊԸ-ն 1,2,3,4,5,6,7,8,10,11,12-րդ չափաբաժիններով, «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն 1,2,8,12-րդ չափաբաժիններով առաջարկել են ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ

Մասնակցի առաջարկում կոտորակներով առանձնացված է առաջարկվող գները առանց ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափով և դրանով:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Ընթացակարգում բանակցություններ չեն վարվել:

3.4 «Մոսէսքո» ՍՊԸ-ի գնային առաջարկը 3-րդ և 7-րդ չափաբաժիններով, իսկ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը 4-րդ և 8-րդ չափաբաժիններով գնահատվել է ***չհիմնավորված ցածր գնային առաջարկ:***

Քանի որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգի 9-րդ (Հակակոռոզիոն յուղեր /ՖՊ-10/) և 11-րդ (Օդամղիչային յուղեր /Կոմպրեսորային ԿՁ-10/) չափաբաժինների մասով «Մոսէսքո» ՍՊԸ-ի առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 26.04.2016թ. ժամը 11⁰⁰-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ վարվել են բանակցություններ: Բանակցությունների ավարտին «Մոսէսքո» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի համար առաջարկել է 87 000 000 ՀՀ դրամ, իսկ 11-րդ չափաբաժնի համար՝ 480 000 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

*(Ա. Գրիգորյան)*

4.1 **02.05.2016թ.** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն և «Մոսէսքո» ՍՊԸ –ն ըստ առանձին չափաբաժինների :

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորումներ, քանի որ հանձնաժողովի կողմից այն գնահատվել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ :

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ(եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ա. Գրիգորյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Գրիգորյան)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/18-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**Գնահատող** Վ. Գասպարյան

**Գնահատող** Կ. Մխիթարյան

**Գնահատող** Գ. Ռուստյան

**Գնահատող** Ա. Մուրադյան

**Գնահատող** Ա. Աթանեսյան

**Գնահատող** Ա. Հակոբյան

**Գնումները համակարգող՝** Ա. Գրիգորյան